ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱՆԱԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ («Հայաստան»)՝

մի կողմից, և

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ («Միություն» կամ «ԵՄ»)՝

մյուս կողմից,

այսուհետ միասին՝ «Կողմեր»,

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ, որ իր ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության շրջանակներում Միությունը կարող է որոշում կայացնել՝ ձեռնարկելու ճգնաժամային կառավարման այնպիսի գործողություններ, որոնք կարող են ներառել «Եվրոպական միության մասին» պայմանագրի 42(1) և 43(1) հոդվածներում սահմանված առաջադրանքները՝ Եվրոպական միության խորհրդի (այսուհետ՝ «Խորհուրդ») որոշման համաձայն,

ՃԱՆԱՉԵԼՈՎ համաշխարհային խաղաղության կարևորությունը բոլոր պետությունների զարգացման համար և ՀԱՎԱՏԱՐԻՄ ՄՆԱԼՈՎ իրենց համապատասխան հարևան պետություններում և ամբողջ աշխարհում խաղաղության և անվտանգության պահպանմանը նպաստելու քաղաքականությանը՝ հիմնվելով Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության սկզբունքների վրա,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ Կողմերի՝ անվտանգության և պաշտպանության հարցերում իրենց համագործակցությունն ամրապնդելու հանձնառությունը և ընդունելով, որ Հայաստանի անձնակազմի և անվտանգության ուժերի հնարավորությունները և կարողությունները կարող են օգտագործվել ԵՄ ճգնաժամային կառավարման գործողություններում,

ՑԱՆԿԱՆԱԼՈՎ ԵՄ ճգնաժամային կառավարման գործողություններին Հայաստանի մասնակցության ընդհանուր պայմանները սահմանել նման հնարավոր հետագա մասնակցության շրջանակը սահմանող համաձայնագրում՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում յուրաքանչյուր գործողության համար այդ պայմանները սահմանելու փոխարեն,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ սույն Համաձայնագիրը չպետք է սահմանափակի որոշումների կայացման հարցում Միության անկախությունը և չպետք է հակասի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ԵՄ ճգնաժամային կառավարման գործողությանը մասնակցելու վերաբերյալ Հայաստանի կողմից որոշում կայացնելու հարցում անհատական մոտեցում ցուցաբերելու սկզբունքին,

ՔԱՆԻ ՈՐ Միությունն է որոշում, թե արդյոք ԵՄ ճգնաժամային կառավարման գործողություններում կիրավիրվեն մասնակցելու երրորդ պետություններ, Հայաստանը կարող է ընդունել Միության հրավերը և առաջարկել իր ներդրումը: Այդ դեպքում Միությունն է որոշում կայացնում առաջարկվող ներդրումն ընդունելու վերաբերյալ:

ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ.

ԲԱԺԻՆ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 1

Մասնակցությանը վերաբերող որոշումները

1. ԵՄ ճգնաժամային կառավարման գործողությանը մասնակցելու նպատակով Հայաստանին հրավիրելու վերաբերյալ Միության կողմից որոշում ընդունելուց հետո Հայաստանը սույն Համաձայնագրի իրականացման շրջանակներում Միությանը տեղեկացնում է իր մասնակցության, այդ թվում՝ առաջարկվող ներդրման մասին իր իրավասու մարմնի կայացրած որոշման վերաբերյալ:

2. Միությունը հնարավորինս շուտ Հայաստանին տրամադրում է նախնական տեղեկություններ գործողությունների ընդհանուր ծախսերում հնարավոր ներդրման վերաբերյալ՝ Հայաստանին իր առաջարկի ձևակերպման հարցում աջակցելու նպատակով:

3. Միությունը Հայաստանի կողմից առաջարկվող ներդրման գնահատումն իրականացնում է՝ խորհրդակցելով վերջինիս հետ:

4. Միությունն իր գնահատման արդյունքների և Հայաստանի առաջարկվող ներդրման վերաբերյալ որոշման մասին Հայաստանին տեղեկացնում է գրավոր՝ սույն Համաձայնագրին համապատասխան Հայաստանի մասնակցությունն ապահովելու նպատակով:

5. 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի կողմից առաջարկվող ներդրումը և 4-րդ կետի համաձայն՝ Միության կողմից դրա ընդունումը հիմք են ծառայում ԵՄ ճգնաժամային կառավարման յուրաքանչյուր կոնկրետ գործողության դեպքում սույն Համաձայնագրի կիրառման համար:

6. Հայաստանը կարող է սեփական նախաձեռնությամբ կամ Միության դիմումով և Կողմերի միջև խորհրդակցությամբ ցանկացած ժամանակ ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվել մասնակցելու ԵՄ ճգնաժամային կառավարման գործողությանը:

ՀՈԴՎԱԾ 2

Շրջանակը

1. Հայաստանը կմիանա համապատասխան այնպիսի որոշման, որով Խորհուրդը որոշում է, որ Միությունը իրականացնելու է ճգնաժամային կառավարման գործողություն, և՝ ցանկացած այլ այնպիսի որոշման, որով Խորհուրդը որոշում է երկարաձգել ճգնաժամային կառավարման գործողության ժամկետը՝ սույն Համաձայնագրին և կիրարկման ցանկացած անհրաժեշտ կարգավորումներին համապատասխան:

2. Հայաստանի ներդրումը ԵՄ ճգնաժամային կառավարման գործողությանը չպետք է սահմանափակի որոշումների կայացման հարցում Միության անկախությունը:

ՀՈԴՎԱԾ 3

Հայաստանի անձնակազմի և ուժերի կարգավիճակը

1. Հայաստանի կողմից ԵՄ ճգնաժամային կառավարման քաղաքացիական գործողության համար գործուղված անձնակազմի, ինչպես նաև ԵՄ ճգնաժամային կառավարման ռազմական գործողության համար տրամադրված անձնակազմի և ուժերի կարգավիճակի հարցերը կարգավորվում են ուժերի կարգավիճակի մասին համապատասխան համաձայնագրով կամ առաքելության կարգավիճակի մասին համապատասխան համաձայնագրով, եթե այդպիսի համաձայնագիր կնքվել է, կամ Միության և պետության (պետությունների) միջև ցանկացած այլ այնպիսի կարգավորմամբ, որի շրջանակներում իրականացվում է գործողությունը: Հայաստանը տեղեկացվում է այդ մասին:

2. Այն պետության (պետությունների) սահմաններից դուրս տեղակայված գլխամաս կամ հրամանատարական ստորաբաժանումներ ուղարկված անձնակազմի կարգավիճակը, որտեղ իրականացվում է ԵՄ ճգնաժամային կառավարման գործողությունը, կարգավորվում է համապատասխան գլխամասի և հրամանատարական ստորաբաժանումների և Հայաստանի իրավասու մարմինների միջև համաձայնեցված կարգավորումներով:

3. Չհակասելով 1-ին կետում նշված՝ ուժերի կարգավիճակի մասին համաձայնագրին կամ առաքելության կարգավիճակի մասին համաձայնագրին՝ Հայաստանն իրավազորություն է իրականացնում ԵՄ ճգնաժամային կառավարման գործողությանը մասնակցող իր անձնակազմի նկատմամբ: Եթե Հայաստանի ուժերը գործում են Միության անդամ պետության նավի վրա կամ օդանավում, ապա դրանց նկատմամբ այդ անդամ պետությունը կարող է իրավազորություն իրականացնել ցանկացած գործող կամ հետագա համաձայնագրերի հիման վրա և իր օրենքներին ու կարգավորումներին, ինչպես նաև միջազգային իրավունքին համապատասխան:

4. Հայաստանը պատասխանատու է ԵՄ ճգնաժամային կառավարման գործողությանն իր մասնակցության հետ կապված ցանկացած այնպիսի պահանջի արձագանքելու համար, որը ներկայացվում է իր անձնակազմի որևէ անդամի կողմից կամ վերաբերում է նրան, ինչպես նաև պատասխանատու է իր անձնակազմի ցանկացած անդամի նկատմամբ ցանկացած գործողություն ձեռնարկելու, մասնավորապես՝ իրավական կամ կարգապահական՝ իր օրենքներին և կարգավորումներին համապատասխան:

5. Կողմերը համաձայնում են հրաժարվել միմյանց ուղղված ցանկացած և բոլոր՝ պայմանագրային պահանջներ չհամարվող պահանջներից՝ կապված Կողմերից մեկին պատկանող կամ վերջինիս կողմից կառավարվող գույքին հասցված վնասի, կորստի կամ ոչնչացման, ինչպես նաև Կողմերից մեկի անձնակազմի անդամի ստացած վնասվածքի կամ մահվան դեպքի հետ, որն առաջացել է սույն Համաձայնագրով նախատեսված գործողությունների հետ կապված իր պաշտոնեական պարտականությունների կատարման հետևանքով՝ բացառությամբ կոպիտ անփութության կամ դիտավորյալ ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման դեպքերի:

6. Հայաստանը պարտավորվում է հայտարարություն անել Հայաստանի մասնակցությամբ ԵՄ ճգնաժամային կառավարման գործողությանը մասնակցող ցանկացած պետությանն ուղղված պահանջներից հրաժարվելու մասին և այդ հայտարարությունն անել սույն Համաձայնագիրը ստորագրելիս:

7. Միությունը պարտավորվում է ապահովել, որ իր անդամ պետությունները հայտարարություն անեն ԵՄ ճգնաժամային կառավարման գործողությանը Հայաստանի ցանկացած հետագա մասնակցության հետ կապված պահանջներից հրաժարվելու մասին և այդ հայտարարությունն անեն սույն Համաձայնագիրը ստորագրելիս:

ՀՈԴՎԱԾ 4

Գաղտնի տեղեկատվությունը

1. Հայաստանը ձեռնարկում է համապատասխան միջոցներ՝ ԵՄ գաղտնի տեղեկատվության պաշտպանությունն ապահովելու համար՝ ԵՄ գաղտնի տեղեկատվության պաշտպանության վերաբերյալ Խորհրդի անվտանգության այն կանոններին համապատասխան, որոնք ներառված են Խորհրդի թիվ 2013/488/ԵՄ[1] որոշման մեջ, ինչպես նաև իրավասու մարմինների, այդ թվում՝ ԵՄ ճգնաժամային կառավարման ռազմական գործողության վերաբերյալ ԵՄ գործողության հրամանատարի կամ ԵՄ ճգնաժամային կառավարման քաղաքացիական գործողության վերաբերյալ ԵՄ առաքելության ղեկավարի կողմից տրված լրացուցիչ ցուցումներին համապատասխան:

2. Եթե Կողմերը կնքում են համաձայնագիր գաղտնի տեղեկատվության փոխանակման ժամանակ անվտանգության ապահովման ընթացակարգերի մասին, այդ համաձայնագիրը կիրառվում է ԵՄ ճգնաժամային կառավարման գործողության համատեքստում:

---

[1] «ԵՄ գաղտնի տեղեկատվության պաշտպանության վերաբերյալ անվտանգության կանոնների մասին» Խորհրդի 2013 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 2013/488/ԵՄ որոշում (ԵՄՊՏ L 274, 15.10.2013, էջ 1, http://data.europa.eu/eli/dec/2013/488/oj):

ԲԱԺԻՆ II

ԵՄ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 5

ԵՄ ճգնաժամային կառավարման քաղաքացիական գործողության համար գործուղված անձնակազմը

1. Հայաստանի Հանրապետությունը՝

(a) ապահովում է, որ ԵՄ ճգնաժամային կառավարման քաղաքացիական գործողության համար գործուղված իր անձնակազմը իր առաքելությունն իրականացնի՝

(i) Խորհրդի համապատասխան որոշման և դրա հետագա փոփոխությունների համաձայն՝ 2-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված կարգով.

(ii) գործողությունների պլանի համաձայն.

(iii) ցանկացած կիրառելի կիրարկման կարգավորման համաձայն.

(iv) ԵՄ ճգնաժամային կառավարման քաղաքացիական գործողությունների ցանկացած կիրառելի քաղաքականության համաձայն.

(b) սահմանված ժամկետներում տեղեկացնում է ԵՄ քաղաքացիական գործողության հրամանատարին ԵՄ ճգնաժամային կառավարման քաղաքացիական գործողությանն իր ունեցած ներդրման ցանկացած փոփոխության մասին:

2. ԵՄ ճգնաժամային կառավարման քաղաքացիական գործողությանը մասնակցելու համար Հայաստանի կողմից գործուղված անձնակազմը պետք է անցնի բժշկական զննություն, լինի պատվաստված (ըստ կարգի), և Հայաստանի իրավասու մարմնի կողմից նրա առողջական վիճակը պետք է ճանաչվի պիտանի ծառայության համար, ինչպես նաև այն պետք է ներկայացնի պիտանի ճանաչելու մասին եզրակացության օրինակը:

3. Հայաստանի կողմից գործուղված անձնակազմը պետք է կատարի իր վրա դրված պարտականությունները և դրսևորի բացառապես ԵՄ ճգնաժամային կառավարման քաղաքացիական գործողության շահերին համապատասխանող վարքագիծ՝ պահպանելով վարքագծի ամենաբարձր այն չափանիշները, որոնք սահմանված են ԵՄ ճգնաժամային կառավարման քաղաքացիական գործողությունների նկատմամբ կիրառելի քաղաքականությամբ:

ՀՈԴՎԱԾ 6

Հրամանատարական շղթա

1. ԵՄ ճգնաժամային կառավարման քաղաքացիական գործողություններին մասնակցող ամբողջ անձնակազմը շարունակում է գտնվել իր ազգային մարմինների լիակատար հրամանատարության ներքո:

2. Ազգային մարմինները օպերատիվ վերահսկողությունը հանձնում են ԵՄ քաղաքացիական գործողության հրամանատարին:

3. ԵՄ քաղաքացիական գործողության հրամանատարը ստանձնում է պատասխանատվություն և ռազմավարական մակարդակում իրականացնում է ԵՄ ճգնաժամային կառավարման քաղաքացիական գործողության հրամանատարությունն ու վերահսկողությունը:

4. ԵՄ առաքելության ղեկավարը ԵՄ ճգնաժամային կառավարման քաղաքացիական գործողության համար ստանձնում է պատասխանատվություն և իրականացնում այդ գործողության հրամանատարությունն ու վերահսկողությունը մարտավարական մակարդակում, ինչպես նաև ստանձնում է դրա ամենօրյա կառավարումը:

5. Գործողության ամենօրյա կառավարման մասով Հայաստանն օժտված է նույն իրավունքներով ու պարտականություններով, որով օժտված են Միության՝ գործողությանը մասնակցող անդամ պետությունները՝ 2-րդ հոդվածի 1-ին կետում նշված իրավական փաստաթղթերի համաձայն:

6. Առաքելության ղեկավարը պատասխանատու է ԵՄ ճգնաժամային կառավարման քաղաքացիական գործողության անձնակազմի կարգապահության նկատմամբ հսկողություն իրականացնելու համար: Անհրաժեշտության դեպքում համապատասխան ազգային մարմինը ձեռնարկում է կարգապահական միջոցներ:

7. Հայաստանը նշանակում է ազգային զորախմբի համակարգող մարմին (ԱՀՄ)՝ ԵՄ ճգնաժամային կառավարման քաղաքացիական գործողությունում իր ազգային զորախումբը ներկայացնելու համար: ԱՀՄ-ն հաշվետու է Ազգային հարցերով ԵՄ առաքելության ղեկավարին և պատասխանատու է Հայաստանի զորախմբի ամենօրյա կարգապահության համար:

8. ԵՄ ճգնաժամային կառավարման քաղաքացիական գործողության դադարեցման մասին որոշումն ընդունում է Միությունը՝ Հայաստանի հետ խորհրդակցությամբ, այն դեպքում, երբ Հայաստանը դեռևս ներդրում է ունենում այդ գործողության մեջ այդ ամսաթվի դրությամբ:

ՀՈԴՎԱԾ 7

Ֆինանսական հարցերը

1. Չհակասելով 8-րդ հոդվածի դրույթներին՝ Հայաստանը կրում է ԵՄ ճգնաժամային կառավարման քաղաքացիական գործողությանն իր մասնակցության հետ կապված բոլոր ծախսերը՝ բացառությամբ ընթացիկ ծախսերի, ինչպես սահմանված է գործողության համար նախատեսված ընթացիկ ծախսերի բյուջեով:

2. Այն պետության (պետությունների) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց մահվան, նրանց պատճառված վնասվածքի, կորստի կամ վնասի դեպքում, որտեղ իրականացվում է ԵՄ ճգնաժամային կառավարման քաղաքացիական գործողությունը, Հայաստանի կողմից հնարավոր պատասխանատվության և փոխհատուցման հարցերը կարգավորվում են 3 (1) հոդվածով նախատեսված՝ առաքելության կարգավիճակի մասին կիրառելի համաձայնագրով սահմանված պայմանների կամ ցանկացած այլընտրանքային կիրառելի դրույթների համաձայն:

ՀՈԴՎԱԾ 8

Ներդրումը ընթացիկ ծախսերի բյուջեում

1. Սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն և չնայած 1-ին հոդվածի 5-րդ կետի դրույթներին՝ Հայաստանը ներդրում է ունենում ԵՄ ճգնաժամային կառավարման համապատասխան քաղաքացիական գործողության ընթացիկ ծախսերի բյուջեի ֆինանսավորման մեջ:

2. 1-ին կետում նշված ներդրումը հաշվարկվում է հետևյալ բանաձևերից որևէ մեկի հիման վրա՝ կախված այն հանգամանքից, թե որն է ավելի քիչ գումար ենթադրում.

(a) ընթացիկ ծախսերի բյուջեի համար բազային գումարի մասնաբաժին, որը համամասնական է Հայաստանի համախառն ազգային եկամտի (ՀԱԵ) և բոլոր այն պետությունների ընդհանուր ՀԱԵ-ների հարաբերակցությանը, որոնք ներդրում են ունենում գործողության ընթացիկ ծախսերի բյուջեում, կամ

(b) ընթացիկ ծախսերի բյուջեի համար բազային գումարի մասնաբաժին, որը համամասնական է Հայաստանից գործողությանը մասնակցող անձնակազմի անդամների թվի և բոլոր այն պետությունների անձնակազմերի անդամների ընդհանուր թվի հարաբերակցությանը, որոնք մասնակցում են գործողությանը:

3. Չնայած 1-ին և 2-րդ կետերի դրույթներին՝ Հայաստանը որևէ ներդրում չի ունենում Միության անդամ պետությունների անձնակազմին վճարվող օրապահիկի ֆինանսավորման մեջ:

4. Չնայած 1-ին կետի դրույթներին՝ Միությունը Հայաստանին սկզբունքորեն ազատում է ԵՄ ճգնաժամային կառավարման կոնկրետ քաղաքացիական գործողության մեջ ֆինանսական ներդրումներ ունենալու պարտավորությունից, եթե՝

(a) Միությունը գտնում է, որ Հայաստանն ապահովում է այնպիսի զգալի ներդրում, որն էական նշանակություն ունի այդ գործողության համար, կամ

(b) Հայաստանի ՀԱԵ-ն մեկ շնչի հաշվով չի գերազանցում Միության ցանկացած անդամ պետության ՀԱԵ-ն՝ մեկ շնչի հաշվով:

5. Համաձայն 1-ին կետի դրույթների՝ ԵՄ ճգնաժամային կառավարման քաղաքացիական գործողության ընթացիկ ծախսերի բյուջեում Հայաստանի կողմից կատարվող ներդրման վճարման վերաբերյալ ցանկացած կարգավորում համաձայնեցվում է Կողմերի իրավասու մարմինների միջև և, ի թիվս այլնի (inter alia), ներառում է դրույթներ հետևյալի մասին.

(a) համապատասխան ֆինանսական ներդրման գումարի չափի,

(b) ֆինանսական ներդրման գումարը վճարելու կարգավորումների, և

(c) հաշվեքննություն իրականացնելու կարգի:

ԲԱԺԻՆ III

ԵՄ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 9

Մասնակցությունը ԵՄ ճգնաժամային կառավարման ռազմական գործողությանը

1. Հայաստանի Հանրապետությունը՝

(a) ապահովում է ԵՄ ճգնաժամային կառավարման ռազմական գործողությանը մասնակցող իր ուժերի և անձնակազմի կողմից իրենց առաքելության կատարումը՝

(i) Խորհրդի համապատասխան որոշման և դրա հետագա փոփոխությունների համաձայն՝ 2 (1) հոդվածով նախատեսված կարգով.

(ii) գործողությունների պլանի համաձայն.

(iii) ցանկացած կիրառելի կիրարկման կարգավորման համաձայն, և

(iv) ԵՄ ճգնաժամային կառավարման ռազմական գործողությունների ցանկացած կիրառելի քաղաքականության համաձայն.

և,

(b) սահմանված ժամկետներում տեղեկացնում է ԵՄ գործողության հրամանատարին ԵՄ ճգնաժամային կառավարման ռազմական գործողությանն իր մասնակցության ցանկացած փոփոխության մասին:

2. Հայաստանի կողմից գործուղված անձնակազմը կատարում է իր պարտականությունները և դրսևորում է բացառապես ԵՄ ճգնաժամային կառավարման ռազմական գործողության շահերին համապատասխանող վարքագիծ՝ պահպանելով վարքագծի այն ամենաբարձր չափանիշները, որոնք սահմանված են ԵՄ ճգնաժամային կառավարման ռազմական գործողությունների համար կիրառվող քաղաքականությամբ:

ՀՈԴՎԱԾ 10

Հրամանատարական շղթա

1. ԵՄ ճգնաժամային կառավարման ռազմական գործողությանը մասնակցող բոլոր ուժերը և անձնակազմը շարունակում են գտնվել իրենց ազգային մարմինների լիակատար հրամանատարության ներքո:

2. Ազգային մարմիններն իրենց ուժերի և անձնակազմի օպերատիվ և մարտավարական հրամանատարությունը և (կամ) վերահսկողությունը հանձնում են ԵՄ գործողության հրամանատարին, որն իրավասու է պատվիրակել իր լիազորությունը:

3. Համաձայն 2 (1) հոդվածում նշված իրավական փաստաթղթերի՝ ԵՄ ճգնաժամային կառավարման ռազմական գործողության ամենօրյա կառավարման մասով Հայաստանն օժտված է նույն իրավունքներով ու պարտականություններով, որով օժտված են Միության՝ գործողությանը մասնակցող անդամ պետությունները:

4. ԵՄ գործողության հրամանատարը Հայաստանի հետ խորհրդակցությամբ ցանկացած ժամանակ կարող է պահանջել հետ կանչել Հայաստանի կատարած ներդրումը:

5. Հայաստանը նշանակում է ռազմական ավագ ներկայացուցիչ (ՌԱՆ)՝ ԵՄ ճգնաժամային կառավարման ռազմական գործողության շրջանակներում իր ազգային զորախումբը ներկայացնելու համար: ՌԱՆ-ը գործողությանն առնչվող բոլոր հարցերի շուրջ խորհրդակցում է ԵՄ ուժերի հրամանատարի հետ և պատասխանատու է Հայաստանի զորախմբի ամենօրյա կարգապահության համար:

ՀՈԴՎԱԾ 11

Ֆինանսական հարցերը

1. Չհակասելով 12-րդ հոդվածի դրույթներին՝ Հայաստանը կրում է ԵՄ ճգնաժամային կառավարման ռազմական գործողությանն իր մասնակցության հետ կապված բոլոր ծախսերը, եթե ծախսերը չեն ծածկվում ընդհանուր ֆինանսավորմամբ, ինչպես նախատեսված է 2-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իրավական փաստաթղթերով, ինչպես նաև Խորհրդի (ԸԱԱՔ) թիվ 2015/528 որոշմամբ[1]:

2. Այն պետության (պետությունների) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց մահվան, նրանց պատճառված վնասվածքի, կորստի կամ վնասի դեպքում, որտեղ իրականացվում է ԵՄ ճգնաժամային կառավարման ռազմական գործողությունը, Հայաստանի կողմից հնարավոր պատասխանատվության և փոխհատուցման հարցերը կարգավորվում են 3-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ ուժերի կարգավիճակի մասին կիրառելի համաձայնագրով սահմանված պայմանների կամ ցանկացած այլընտրանքային կիրառելի դրույթի համաձայն:

ՀՈԴՎԱԾ 12

Ներդրումն ընդհանուր ծախսերում

1. Սույն հոդվածի 3-րդ կետի համաձայն և չնայած 1-ին հոդվածի 5-րդ կետի դրույթներին՝ Հայաստանը ներդրում է ունենում համապատասխան ԵՄ ճգնաժամային կառավարման ռազմական գործողության ընթացիկ ծախսերի բյուջեի ֆինանսավորման մեջ:

2. 1-ին կետում նշված ներդրումը հաշվարկվում է հետևյալ բանաձևերից որևէ մեկի հիման վրա՝ կախված այն հանգամանքից, թե որն է ավելի քիչ գումար ենթադրում.

(a) ընդհանուր ծախսերի մասնաբաժինը, որը համամասնական է Հայաստանի համախառն ազգային եկամտի (ՀԱԵ) և բոլոր այն պետությունների ընդհանուր ՀԱԵ-ների հետ հարաբերակցությանը, որոնք ներդրում են կատարում գործողության ընդհանուր ծախսերում, կամ

---

[1] «Եվրոպական միության ռազմական կամ պաշտպանական նշանակության գործողությունների ընդհանուր ծախսերի ֆինանսավորումը կառավարելու մեխանիզմը («Աթենա») սահմանելու և թիվ 2011/871/ԸԱԱՔ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Խորհրդի 2015 թվականի մարտի 27-ի թիվ 2015/528 որոշում (ԸԱԱՔ), (ԵՄՊՏ L 84, 28.03.2015, էջ 39, http://data.europa.eu/eli/dec/2015/528/oj):

(b) ընդհանուր ծախսերի մասնաբաժինը, որը համամասնական է Հայաստանից գործողությանը մասնակցող անձնակազմի անդամների թվի և բոլոր այն պետությունների անձնակազմերի անդամների ընդհանուր թվի հարաբերակցությանը, որոնք մասնակցում են գործողությանը:

Եթե կիրառվում է (b) կետում նշված բանաձևը, և Հայաստանը անձնակազմ է տրամադրում միայն գործողության կամ ուժերի գլխավոր շտաբի համար, ապա կիրառվում է իր անձնակազմի և համապատասխան գլխավոր շտաբի անձնակազմի անդամների ընդհանուր թվի հարաբերակցության ցուցանիշը: Այլ դեպքերում կիրառվում է Հայաստանի կողմից տրամադրված ամբողջ անձնակազմի և գործողությանը մասնակցող անձնակազմի բոլոր անդամների հարաբերակցության ցուցանիշը:

3. Չնայած 1-ին կետի դրույթներին՝ Միությունը Հայաստանին սկզբունքորեն ազատում է ԵՄ ճգնաժամային կառավարման կոնկրետ ռազմական գործողության մեջ ֆինանսական ներդրումներ ունենալու պարտավորությունից, եթե՝

(a) Միությունը գտնում է, որ Հայաստանն ապահովում է այնպիսի զգալի ներդրում, որն էական նշանակություն ունի այդ գործողության համար, կամ

(b) Հայաստանի ՀԱԵ-ն մեկ շնչի հաշվով չի գերազանցում Միության ցանկացած անդամ պետության ՀԱԵ-ն՝ մեկ շնչի հաշվով:

4. Համաձայն 1-ին կետիի դրույթների՝ ընդհանուր ծախսերում Հայաստանի կողմից կատարվող ներդրման վերաբերյալ ցանկացած կարգավորում համաձայնեցվում է Կողմերի իրավասու մարմինների միջև և, ի թիվս այլնի (inter alia), ներառում է դրույթներ հետևյալի մասին.

(a) համապատասխան ֆինանսական ներդրման գումարի չափի,

(b) ֆինանսական ներդրման գումարը վճարելու կարգավորումների, և

(c) հաշվեքննություն իրականացնելու կարգի:

ԲԱԺԻՆ IV

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 13

Համաձայնագրի կիրարկման կարգավորումները

Չհակասելով 8(5) and 12(3) հոդվածների դրույթներին՝ սույն Համաձայնագրի կիրարկման համար անհրաժեշտ ցանկացած տեխնիկական և վարչական կարգավորում համաձայնեցվում է Կողմերի իրավասու մարմինների միջև:

Հոդված 14

Իրավասու մարմինները

Սույն Համաձայնագրի նպատակներով Հայաստանի իրավասու մարմինն է Ներքին գործերի նախարարությունը, եթե Միությանն այլ բան չի ծանուցվել:

Հոդված 15

Անհամապատասխանությունը

Կողմերից որևէ մեկի կողմից սույն Համաձայնագրով նախատեսված իր պարտավորությունների չկատարման դեպքում մյուս Կողմը իրավասու է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ այդ մասին մեկ ամիս առաջ գրավոր ծանուցելով:

ՀՈԴՎԱԾ 16

Վեճերի լուծումը

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման հետ կապված վեճերը Կողմերի միջև կարգավորվում են դիվանագիտական միջոցներով:

ՀՈԴՎԱԾ 17

Ուժի մեջ մտնելը, գործողության ժամկետը և դադարեցումը

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին իրավական ընթացակարգերի կատարումն ավարտելու մասին Կողմերի միմյանց ծանուցելու ամսվան հաջորդող ամսվա առաջին օրը:

2. Համաձայնագիրը վերանայվում է Կողմերից մեկի պահանջով:

3. Սույն Համաձայնագրում կարող է փոփոխություն կատարվել Կողմերի գրավոր համաձայնությամբ: Այդ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 1-ին կետով սահմանված ընթացակարգի համաձայն:

4. Սույն Համաձայնագիրը կարող է դադարեցվել Կողմերից յուրաքանչյուրի կողմից մյուս Կողմին ուղարկված՝ դադարեցման մասին գրավոր ծանուցմամբ: Այդ դեպքում դադարեցումն իրավական ուժ է ստանում ծանուցումը մյուս Կողմի ստանալու պահից վեց ամիս հետո:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է հայերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են:

Կատարված է Երևանում երկու հազար քսանհինգ թվականի հունիսի երեսունին:

Հայաստանի Հանրապետության կողմից՝

Եվրոպական միության կողմից՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՄ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԿԻՐԱՌՈՂ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Միության այն անդամ պետությունները, որոնք կիրառում են Հայաստանի մասնակցությամբ ԵՄ ճգնաժամային կառավարման գործողության վերաբերյալ Խորհրդի որոշումը, կձգտեն, այնքանով, որքանով թույլ են տալիս իրենց ներպետական իրավական համակարգերը, հնարավորինս հրաժարվել Հայաստանին ուղղված ցանկացած այնպիսի պահանջից, որը կապված է իրենց անձնակազմի անդամների ստացած վնասվածքի կամ մահվան դեպքերի կամ իրենց պատկանող կամ ԵՄ ճգնաժամային կառավարման գործողության շրջանակներում գործածվող գույքին հասցված վնասի կամ կորստի հետ, եթե այդպիսի վնասվածքը, մահվան դեպքը, վնասը կամ կորուստը՝

– պատճառվել է ԵՄ ճգնաժամային կառավարման գործողության շրջանակներում Հայաստանի տրամադրած անձնակազմի անդամների կողմից՝ տվյալ գործողության առնչությամբ նրանց պարտականությունների կատարման ընթացքում՝ բացառությամբ կոպիտ անփութության կամ դիտավորյալ ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման դեպքերի, կամ

– առաջացել է Հայաստանին պատկանող որևէ գույքի օգտագործման հետևանքով՝ պայմանով, որ այդ գույքն օգտագործվել է ԵՄ ճգնաժամային կառավարման գործողության առնչությամբ՝ բացառությամբ այդ գույքն օգտագործող՝ տվյալ գործողության շրջանակներում Հայաստանի տրամադրած անձնակազմի անդամների կոպիտ անփութության կամ դիտավորյալ ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման դեպքերի»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՄ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՑԱՆԿԱՑԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանը, համաձայնելով մասնակցել ԵՄ ճգնաժամային կառավարման գործողությանը, կձգտի, այնքանով, որքանով թույլ է տալիս իր ներպետական իրավական համակարգը, հնարավորինս հրաժարվել ԵՄ ճգնաժամային կառավարման գործողությանը մասնակցող ցանկացած պետությանն ուղղված ցանկացած այնպիսի պահանջից, որը կապված է իր անձնակազմի անդամների ստացած վնասվածքի կամ մահվան դեպքերի կամ իրեն պատկանող կամ ԵՄ ճգնաժամային կառավարման գործողության շրջանակներում գործածվող գույքին հասցված վնասի կամ կորստի հետ, եթե այդպիսի վնասվածքը, մահվան դեպքը, վնասը կամ կորուստը՝

– պատճառվել է ԵՄ ճգնաժամային կառավարման գործողությանը մասնակցող ցանկացած պետության կողմից տրամադրված անձնակազմի անդամների կողմից՝ տվյալ գործողության առնչությամբ նրանց պարտականությունների կատարման ընթացքում՝ բացառությամբ կոպիտ անփութության կամ դիտավորյալ ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման դեպքերի, կամ

– առաջացել է ԵՄ ճգնաժամային կառավարման գործողությանը մասնակցող պետություններին պատկանող որևէ գույքի օգտագործման հետևանքով՝ պայմանով, որ այդ գույքն օգտագործվել է տվյալ գործողության առնչությամբ՝ բացառությամբ այդ գույքն օգտագործող՝ ԵՄ ճգնաժամային կառավարման գործողության մեջ ներգրավված անձնակազմի անդամների կոպիտ անփութության կամ դիտավորյալ ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման դեպքերի»:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2025թ. հունիսի 30-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Եվրոպական միության ճգնաժամային կառավարման գործողություններում Հայաստանի Հանրապետության մասնակցության շրջանակը սահմանելու մասին» համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետի պ/կ

Լիանա Գրիգորյան